բակ և ավելի լայն տախտակներով։ Այս ամբողջ պսակը ծածկվում է եղեգնով, կամ ավելի հաճախ՝ փշոտ կէնիի՝ գիհի ճյուղերով, ապա վրան հարդով և վերջը անջրաթափանց կավով, որն ամեն անձրևից հետո թակավ տփում են։ Առաստաղի կառուցվածքի, ինչպես և փայտեղեն այլ մասերի համար գերադասում են կաղնու փայտը։

Զանգեզուրն էլ հայկական լեռնաշխարհի այն շրջանն է, որտեղ տան ծածկի համար գործ է ածվում կտուր և ոչ տանիս, տանիք բառը, որը տարածված է արևմտյան և հարավային գավառներում։ Կտուրի վրայից անձրևաջուրը հեռացնելու և պատերի վրայով հոսելուց պաշտպանելու համար կտուրների կողերին հարմարեցվում են բավականին առաջ քաշված շուռուտկանքէր՝ ջրորդան։

Սակայն այս ծանր պսակին նեցուկ են ծառայում ոչ միայն հիմնական չորս սյուները[12]։ Նա որոշ չափով, մանավանդ իր լայն մասով, որը ստորին քառակուսին միացնում է պատերի քառակուսու հետ, հենվում է պատերին կպած կանգնեցրած օժանդակ սյուների վրա։ Սրանք կանգնեցրած են և՛ անկյուններում, և՛ պատերի կողերին կպած 2—3, երբեմն չորս տեղ։ Գլուխները միացած են հորիզոնական ձգվող գերաններով, որոնց ծայրերն իրար հետ ամուր կապված են։ Այսպիսով, գոյանում է քարե պատերի գլխներին կպած և սյուներով նեցուկված փայտե քառակուսի, սովորաբար կէրանքէրի և ջուխտակնէրի քառակուսուց մի փոքր ցածր, որպեսզի այս երկու քառակուսիների արանքները լցնող տրլակօճէրն ունենան թեքություն դեպի դուրս։ Պատերին ընկերակցող այս փայտե վանդակը[13] կոչվում է հրհիօրմի[14], որը առօրմի բառի աղավաղումն է, հայկական ուրիշ գավառների ճարտարապետության մեջ այլ և այլ, բայց միշտ իրար մերձհնչուն ձևերով կրկնվող։ Պատահում են հացատօճէր և առանց հրհիօրմի, քանի որ ծածկի ծանրությունն ընդունում են գլխավորապես չորս սյուները. և ոչ թե պատերը, որոնք այդ պատճառով կարող են կառուցվել թույլ շաղախով, առանց կիր ու ավազի գործածության և կոչված են ոչ թե տանիքն իրենց վրա կրելու, այլ միայն կողերի բաց տարածությունները լցնելու։ Հրհիօրմին կատարում է լրացուցիչ դեր և թեթևացնում է պատերն այն ծանրությունից, որը ունի ստորին հարկի և պատերի քառակուսիների միջև փռված տանիքի համեմատաբար փոքր մասը։ Դրանով չեզոքացվում է այն պակասությունը, որն առաջ է գալիս պատերի ոչ ամուր միաշանգված կառուցման հետևանքով։ Հրհիօրմի օգնությամբ տանիքի ծանրության որոշ չափով սյուների բեռնաթափումը կարևոր է մանավանդ այնպիսի երկրում, որտեղ երկրաշարժը կրկնվող երևույթ է։ Պետք է նշել այն հանգամանքը, որ 1931 թ. երկրաշարժի ժամանակ բնակչությունն իրեն ավելի ապահով էր զգում հացատօճը, քան թե այլ ձևի տների մեջ։ Այդ աղետից քանդված մի հացատօճի լուսանկարը Տաթևում, որը մեր գիտարշավն է հանել, ցույց է տալիս, թե ինչպես տանիքը հաստատված է մնացել իր չորս սյուների վրա, չնայած որ պատերը փլել են։ Մեր պատմագիրներից մեկը, Զաքարիա սարկավագը, նկարագրելով 1679 թ. սոսկալի երկրաշարժը, որի ավերումներին ենթարկվեց ոչ միայն Երևանը, այլև շատ հեռու շրջակայքը, երբ Երևանում

[12] Ժողովրդական ասացվածքով, տան սունի հետ է համեմատվում ընտանիքի այն անդամը, որը տան բարօրության հիմքն է։

[13] Каркас.

[14] Այլ գավառներում կոչվում է ռահիօրմի կամ ռաֆիօրմի։